

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ՀՆԳԱՄՅԱ ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ  
(2016-2021թթ.)



**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2016-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ  
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ**

**I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.**

Գավառի պետական համալսարանը (այսուհետ՝ Համալսարան կամ ԳՊՀ) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում գործող միակ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունն է, որն ունի կրթական, գիտական, ուսումնամեթոդական, դաստիարակչական, ինչպես նաև տնտեսական, սոցիալ-ժողովրդագրական, մշակութային կարևոր նշանակություն:

**II. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆ Է.**

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի առանձնահատկությունների հաշվառմամբ բնական և հասարակական գիտությունների տարբեր ուղղություններով բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի որակյալ իրականացումը, աշխատաշուկայի պահանջների հաշվառմամբ բակալավրի և մագիստրոսի որակավորմամբ մրցունակ մասնագետների պատրաստումը, ուսումնամեթոդական, գիտահետազոտական, դաստիարակչական, սոցիալ-մշակութային գործառույթների, արտաքին համագործակցության ծրագրերի պատշաճ իրականացումը,
2. Գործատու սուբյեկտի պարտականությունների բարեխիղճ կատարումը, դասախոսների ու վարչատնտեսական աշխատակիցների, ինչպես նաև ուսանողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

**III. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ Է.**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի որակյալ իրականացումը, սովորողներին անհրաժեշտ գիտելիքներով, կարողություններով, հմտություններով և արժեքային կողմնորոշիչներով զինումը, մրցունակ և որակյալ մասնագետների պատրաստումը:

#### IV. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏԵՍԼԱԿԱՆՆ Է .

1. Որակի մշակույթի արմատավորումը ուսումնական գործընթացի կազմակերպման, առկա և հեռակա ուսուցման ձևերով բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման, ուսանողակենտրոն կրթական միջավայրի ձևավորման, ուսուցման արդյունավետ մեթոդների և տեխնոլոգիաների կիրառման, կրթական վերջնարդյունքների ձեռքբերման, դասավանդման և գիտահետազոտական գործունեության զուգակցման, ուսանողների համակողմանի դաստիարակության ապահովման, մասնագիտական գործունեությանը նախապատրաստման և համալսարանական գործունեության այլ ոլորտներում:

2. Եռաստիճան կրթական համակարգի աստիճանական ներդրումը, ազգաբնակչության տարբեր շերտերի կրթական կարիքների բացահայտումը և դրան համապատասխան լրացուցիչ կրթական ծառայությունների նոր ցանկի մշակումն ու առաջարկումը, գիտահետազոտական ծրագրերի իրականացումը, բուհի միջազգայնացումը:

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի սոցիալ-տնտեսական, հոգևոր-մշակութային զարգացմանը նպաստումը:

#### V. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԿՋԲՈՒՆՔՆԵՐՆ ԵՆ.

- 1) օրինականության,
- 2) ժողովրդավարության,
- 3) մարդու և քաղաքացու՝ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն ստանալու իրավունքի ապահովման,
- 4) բարձրագույն կրթության մատչելիության,
- 5) կրթական գործընթացի հրապարակայնության, թափանցիկության,
- 6) սովորողների, դասախոսների ու այլ աշխատակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության,
- 7) Համալսարանի միանձնյա և կոլեգիալ ղեկավարման սկզբունքների զուգակցման,
- 8) ուսանողական ինքնակառավարման խթանման,

- 9) Համալսարանի ինքնավարության,
- 10) ակադեմիական ազնվության և բարեվարքության,
- 11) կրթության, գիտության և դաստիարակության գուգակցման,
- 12) կրթական գործընթացի կազմակերպման արդյունավետության սկզբունքները:

**VI. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2016-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ  
ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ ԵՆ.**

1. Համալսարանի 2016-2021 թվականների ռազմավարական ծրագիրը հաստատում է ԳՊՀ կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը:

2. Համալսարանի 2016-2021 թվականների ռազմավարական ծրագիրն իրականացնում են.

- 1) ԳՊՀ գիտական խորհուրդը,
- 2) ռեկտորատը,
- 3) ֆակուլտետները,
- 4) ամբիոնները,
- 5) ակադեմիական քաղաքականության վարչությունը,
- 6) որակի ապահովման բաժինը,
- 7) կադրերի և հատուկ բաժինը,
- 8) հաշվապահությունը,
- 9) հանրության հետ կապերի և լրատվության բաժինը,
- 10) Համալսարանի մյուս կառուցվածքային ստորաբաժանումները,
- 11) ուսանողական ինքնակառավարման մարմինները:

**VII. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ.**

1. Մասնագիտական ամբիոնների կողմից բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի պարբերաբար վերանայում ու արդիականացում, դրանց

բովանդակային և կառուցվածքային բարեփոխում ու բազմազանեցում, օտարալեզու մասնագիտական կրթական ծրագրերի մշակում և իրականացում:

2. Գիտական խորհրդի, ռեկտորատի, ֆակուլտետային խորհուրդների, ամբիոնների կողմից բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման ընթացքի ու արդյունքների մշտադիտարկում և շարունակական բարելավում:

3. Աշխատաշուկայի պահանջների ուսումնասիրում և ուսուցանվող մասնագիտությունների նկատմամբ շուկայական պահանջարկի և սոցիալական պատվերի գնահատում, ՀՀ Գեղարքունիքի մարզի զարգացման առանձնահատկությունների հաշվառմամբ ուսուցանվող մասնագիտությունների ցանկի ճշգրտում, նոր մասնագիտական կրթական ծրագրերի մշակում և իրականացում:

4. Ուսումնական պլաններում նախատեսված բոլոր դասընթացների առարկայական ծրագրերի շարունակական թարմացում, ակնկալվող մասնագիտական իրազեկությունների՝ գիտելիքների, կարողությունների և հմտությունների հստակ սահմանում, կրթական ելքային արդյունքների համապատասխանեցում գործատուների պահանջներին:

5. ԳՊՀ ուսանողի և դասախոսի ուղեցույցերի շարունակական բարեփոխում և ամենամյա հրապարակում, դասընթացների նկարագրերի հստակեցում և մասնագիտությունների տեղեկագրքերի վերամշակում ու արդիականացում:

6. Կրեդիտային համակարգի բոլոր բաղադրիչների հետևողական կիրառում ուսումնական գործընթացում, դրանց արդյունավետության բարձրացում:

7. Ուսանողների համար անհրաժեշտ պայմանների ստեղծում՝ գիտական-տեղեկատվական տարբեր շտեմարանների օգտագործման, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման համար:

8. Երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի, լրացուցիչ և շարունակական կրթական ծրագրերի իրականացման շրջանակի ընդլայնում:

9. Դասավանդման ավանդական և արդի մեթոդների արդյունավետ համադրում, համագործակցային, փոխներգործուն (ինտերակտիվ) և այլ նորարարական կրթական տեխնոլոգիաների կիրառում:

10. Սովորողների գիտելիքների բազմագործոն գնահատման համակարգի կատարելագործում, ուսանողների գիտելիքների ընթացիկ, միջանկյալ և ամփոփիչ

ստուգման ու գնահատման նոր ձևերի և եղանակների կիրառում, համակարգչային թեստերի միջոցով <<Examination.GSU.am>> համակարգով սովորողների գնահատում:

11. Կրթության որակի մշտադիտարկում, ուսումնական գործընթացի կազմակերպման ուժեղ և թույլ կողմերի բացահայտում, ինքնավերլուծության և ինքնագնահատման պարբերաբար իրականացում, անհրաժեշտ միջոցների ձեռնարկում՝ կրթության որակի ապահովման և Համալսարանի ինստիտուցիոնալ ու ծրագրային հավատարմագրման նպատակներով:

12. ԳՊՀ ակադեմիական քաղաքականության վարչության որակի ապահովման բաժնի կողմից ուսանողների և շրջանավարտների շրջանում կրթության որակից բավարարվածության բացահայտման հարցումների պարբերաբար անցկացում, ուսուցման և ուսումնառության որակի համալիր ուսումնասիրություն, ներքին ստուգումների անցկացում, կրթական ծրագրերի իրականացման ընթացքի, դասընթացների կազմակերպման մեկնարկային հնարավորությունների, դասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժական հմտությունների, ուսանողների գիտելիքների որակի բարելավման կառուցակարգերի մշակում և ներդրում:

13. Ամփոփիչ (ավարտական) ատեստավորման գործընթացի կատարելագործում, ամփոփիչ քննությունների, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքում սովորողների կողմից ձեռքբերված ուսումնական վերջնարդյունքների օբյեկտիվ գնահատում:

14. Առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետների շրջանավարտներին եվրոպական նմուշի՝ ութ կառուցամասերով երկլեզու դիպլոմի հավելվածի տրամադրում:

15. Ֆակուլտետների և ամբիոնների աշխատանքի որակի գնահատման նոր գործիքների կիրառում, գիտահետազոտական գործունեության արդյունքների հաշվառում:

16. Ուսումնական խորհրդատուների աշխատանքի արդյունավետության բարձրացում, ուսանողների կրթական կարիքների բացահայտում, նրանց խնդիրների վեր հանում և պատշաճ լուծում, սովորողների ինքնուրույնության բարձրացում իրենց կրթական անհատական ծրագիրը կազմելու և ուսմանը վերաբերող այլ հարցերում:

17. Գրադարանի գրքաֆոնդի համալրում, նոր դասագրքերի, ուսումնական ձեռնարկների և ուղեցույցերի, մենագրությունների ձեռքբերում, տեղեկատվական պաշարների հարստացում, <<E.Library.GSU>> էլեկտրոնային գրադարանի անընդհատ համալրում, գրադարանի տեղեկատվական ռեսուրսների էլեկտրոնային քարտարանի ամբողջական գործարկում:

18. Առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետներում սովորող ուսանողների համար գործող <<E.Learning.GSU.am>> էլեկտրոնային ուսուցման համակարգի կատարելագործում, գիտական աղբյուրներով, ուսումնամեթոդական ձեռնարկներով և այլ օգտակար նյութերով համալրում:

19. Հեռակա ուսուցման համակարգում նպատակային կարգով ընդունելության շրջանակում համագործակցություն ավագ և հիմնական դպրոցների, ինչպես նաև Գեղարքունիքի մարզպետարանի կրթության վարչության հետ:

20. Մագիստրոսական կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչի կարևորում, գիտա-հետազոտական պրակտիկայի և գիտական սեմինարի արդյունավետության բարձրացում, մագիստրոսների հետազոտական աշխատանքի հմտությունների զարգացում:

21. Մագիստրոսական կրթական աստիճանում առաջատար մասնագետների ներգրավվածության աճ, մագիստրոսների հետազոտական աշխատանքների կիրառական ուղղվածության ապահովում:

22. Զայցբուրգյան սկզբունքներին համապատասխանող չափանիշներով կրթական երրորդ աստիճանի ներդրում, ասպիրանտական կրթական ծրագրերի աստիճանական իրականացման համար անհրաժեշտ իրավական, փաստաթղթային, կադրային, նյութատեխնիկական և այլ բազայի ստեղծում:

23. Համալսարանի ուսանողների և դասախոսների ակադեմիական շարժունության խրախուսում, միջազգային ծրագրերին անդամակցություն, կրկնակի և համատեղ աստիճանաշնորհմամբ կրթական ծրագրերի իրականացում:

24. Համալսարանի առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետներում սովորողների ուսումնական, արտադրական, նախաավարտական, գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաների արդյունավետության բարձրացում,

պրակտիկայի բազաների ընդլայնում, պրակտիկայի ընթացքում ուսանողների գործնական կարողությունների զարգացում:

25. ԳՊՀ-ի՝ որպես հեռավար ուսուցման մարզային կենտրոնի կայացում, այդ նպատակով անհրաժեշտ գիտական, կադրային, ուսումնամեթոդական, նյութատեխնիկական, ֆինանսական բազայի ստեղծում:

26. ԳՊՀ ամբիոնների գերակա գիտական ուղղությունների հստակեցում՝ ամբիոնի գիտական ներուժի, դասախոսների գիտական հետաքրքրությունների և արտաքին միջավայրի պահանջների հաշվառմամբ:

27. Համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտահետազոտական գործունեության բարոյական և նյութական խրախուսում, դասախոսների վարկանիշային գնահատման գործընթացում նրանց հրատարակած գիտական աշխատանքների հաշվառում:

28. Միջբուհական գիտական ծրագրերի, համատեղ հետազոտությունների իրականացման նպատակով ֆինանսավորման աղբյուրների որոնում, դրամաշնորհային ծրագրերի ընձեռած հնարավորությունների օգտագործում:

## **VIII. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ**

### **ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ.**

1. ԳՊՀ կրթական միջավայրի վերաբերյալ շահառուների շրջանում հարցումների պարբերաբար իրականացում, կարիքների պարզաբանում և թերությունների շտկում, գրավիչ ակադեմիական միջավայրի ստեղծում:

2. Համալսարանի գործունեությունը կարգավորող ներբուհական փաստաթղթերի և համապատասխան օրենքների, ՀՀ կառավարության որոշումների, ՀՀ կրթության և գիտության նախարարության գերատեսչական և այլ ակտերի համապատասխանության ապահովում:

3. ԳՊՀ-ի՝ որպես միացյալ տեղեկատվական տարածքի զարգացում, տեղեկատվական արդի տեխնոլոգիաներով հագեցած լսարանների ստեղծում բոլոր մասնաշենքերում:

4. ԳՊՀ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության և գործավարության համակարգի կատարելագործում:



5. ԳՊՀ էլեկտրոնային գրադարանի շարունակական համալրում, այլ գիտակրթական հաստատությունների էլեկտրոնային գրադարանների, համացանցային գիտական, տեղեկատվական աղբյուրների հետ ուսանողների և դասախոսների աշխատանքի ապահովում:

6. ԳՊՀ ուսանողական համակազմի և պրոֆեսորադասախոսական, վարչական անձնակազմի տվյալների էլեկտրոնային բազայի կատարելագործում, դասախոսների և ուսանողների էլեկտրոնային հաղորդակցության ապահովում:

7. Դասընթացներին ուսանողների գրանցման, գիտելիքների ընթացիկ, միջանկյալ և ամփոփիչ ստուգման ու գնահատման արդյունքների հաշվառման, ակադեմիական տեղեկատվության կառավարման էլեկտրոնային համակարգի մշակում և ներդրում:

## **IX. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ.**

1. Ուսանողների շրջանում գիտելիքների արժևորում, ուսման նկատմամբ գիտակից և պատասխանատու վերաբերմունքի ձևավորում, կրթամակարդակի գնահատում՝ որպես բարձր կենսամակարդակի ապահովման, սոցիալական կարգավիճակի ձեռքբերման և կյանքի որակի երաշխավորման անհրաժեշտ գործոն:

2. Ուսանողների լեզվական գրագիտության ապահովում, օտար լեզուներով հաղորդակցման, այլալեզու գիտական, տեղեկատվական ռեսուրսների օգտագործման հնարավորության ընձեռում:

3. Ուսանողների համակարգչային և ընդհանուր տեխնիկական գրագիտության ապահովում, <<E.Learning.GSU.am>> էլեկտրոնային ուսուցման համակարգից և <<E.Library.GSU.am>> էլեկտրոնային գրադարանից, այլ ուսումնական, տեղեկատվական ռեսուրսներից արդյունավետ օգտվելու հմտությունների զարգացում:

4. Մովորողների հաղորդակցման և կազմակերպական ունակությունների զարգացում, շարունակական կրթության միջոցով անընդհատ ինքնակատարելագործման և ինքնաիրացման մշակույթի արմատավորում:

5. Ուսանողների սոցիալական կարիքների բացահայտում, թղթային և էլեկտրոնային անձնական գործերի կազմում, սոցիալական վիճակի «անձնագրավորում», սոցիալական օժանդակության հասցեագրված ծրագրերի իրականացում:

6. Ուսանողական ինքնակառավարման մարմինների՝ ուսանողական խորհրդի, ուսանողական գիտական ընկերության գործունեության ակտիվացում, Համալսարանի կառավարման գործընթացում նրանց ակտիվ դերակատարության ապահովում:

7. Ուսանողների համար կրթադաստիարակչական, հոգևոր-մշակութային, բարոյաէթիկական և այլ բնույթի միջոցառումների, ինտելեկտուալ մրցույթների կազմակերպում, «Լավագույն ուսանող», «Լավագույն խումբ», ինչպես նաև «Լավագույն դասախոս», «Լավագույն գիտական աշխատանք» և այլ անվանակարգերում մրցանակաբաշխությունների ամենամյա կազմակերպում, գիտելիքի արժևորմանը միտված ծրագրերի իրականացում:

8. Բազմաբնույթ միջոցառումների կազմակերպում՝ սովորողների հայրենասիրական, քաղաքացիական, իրավական, բարոյական, հոգևոր-մշակութային, աշխատանքային, բնապահպանական, գեղագիտական, էթիկական, ֆիզիկական պատշաճ դաստիարակության նպատակով:

9. Ուսանողներին ակադեմիական աջակցության ցուցաբերում, խորհրդատվական ծրագրերի իրականացում, նրանց հետ շարունակական բացատրական աշխատանքի կատարում, որպեսզի սովորողները ստանան անձնական պատասխանատվություն իրենց ուսման գործընթացի և կրթական ելքային արդյունքների ձեռքբերման նկատմամբ:

10. Ակտիվ քաղաքացիական դիրքորոշում ունեցող, ազգային և համամարդկային արժեքներ կրող քաղաքացիների դաստիարակում, նրանց բարոյականային հատկանիշների զարգացում, ուսանողների շրջանում պատշաճ իրավագիտակցության և իրավական մշակույթի ձևավորում:

**X. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ.**

1. Համալսարանի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացում, վարչարարության միջոցների ու մեթոդների բարելավում, ճկուն կառուցակարգերի և գործիքների կիրառում:

2. Մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետ քաղաքականության իրականացում, որակյալ դասախոսական կազմի և վարչական աշխատակազմի կայունության պահպանում:
3. Մարդկային ռեսուրսների ռազմավարական պլանավորում, աշխատակազմի նպատակային հավաքագրում, ընտրության կազմակերպում, մասնագիտական աջակցման ծրագրերի իրականացում, ուղղորդում, կատարողական արդյունքների ստուգման և գնահատման կառուցակարգերի կիրառում, նրանց ծառայողական առաջխաղացման պլանավորում, փոխհատուցման և պարգևատրման համակարգերի կիրառում, աշխատանքային հարաբերությունների իրավական հստակ կարգավորում:
4. Համալսարանի բոլոր տարակարգերի աշխատակիցների պաշտոնների անձնագրերի կամ աշխատանքի նկարագրերի մշակում, հաստատում և կիրառում:
5. Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների միջև լիազորությունների, գործառնությունների ու պատասխանատվության ճիշտ բաշխում, գործունեության հստակ ուղղորդում, ներդաշնակ և համագործակցված աշխատանքի ապահովում:
6. Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների հաշվետվության մեխանիզմների կատարելագործում և գործունեության արդյունքների գնահատման նոր մեթոդների ու գործիքների կիրառում:
7. Համալսարանի պրոֆեսորադասախոսական, վարչական անձնակազմի մասնագիտական, մանկավարժական, կազմակերպական որակների շարունակական զարգացում՝ վերապատրաստման, որակավորումների բարձրացման ծրագրերի միջոցով:
8. ԳՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի համալրում երիտասարդ կադրերով, փորձառու մասնագետների և սկսնակ դասախոսների արդյունավետ համագործակցության ապահովում:
9. Երիտասարդ դասախոսների մասնագիտական աճի խրախուսում, նրանց գիտահետազոտական աշխատանքների մեջ ընդգրկում:
10. Միջազգային և հանրապետական գիտաժողովներին գիտամանկավարժական կազմի անդամների մասնակցության, միջազգային գրախոսվող գիտական պարբերականներում հետազոտությունների արդյունքների հրապարակման խրախուսում:

11. Դասախոսների աշխատանքի, գիտահետազոտական գործունեության և դասավանդման որակի գնահատման նոր կառուցակարգերի մշակում և կիրառում, դասախոսների վարկանիշային գնահատման արդյունքներով պայմանավորված՝ տարբերակված վարձատրության համակարգի մշակում և աստիճանական գործարկում:

## **XI. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ**

### **ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ**

#### **ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ.**

1. Համալսարանի ֆինանսական ռեսուրսների կառավարման արդյունավետ քաղաքականության իրականացում, ֆինանսական կայունության ապահովում՝ ֆինանսական հոսքերի ճշգրիտ պլանավորման և եկամուտների արդյունավետ օգտագործման միջոցով:

2. Բազմախողովակ ֆինանսավորման կառուցակարգերի կիրառում, հովանավորների, բարերարների հնարավորությունների օգտագործում, նպատակային աշխատանք միջազգային կառույցների, դոնոր կազմակերպությունների հետ:

3. Համալսարանի եկամուտների, բարեսիրական հատկացումների և այլ աղբյուրների հաշվին սոցիալապես անապահով ուսանողների ուսման վարձի զեղչում, բարեխիղճ աշխատակիցների բարոյական և նյութական խրախուսում:

4. Համալսարանի նյութատեխնիկական բազայի պահպանում և ընդլայնում, լաբորատոր բազայի, ուսումնական տարածքի, ուսումնաարտադրական պրակտիկայի բազայի ընդլայնում, գրադարանային-տեղեկատվական ռեսուրսների համալրում, Համալսարանի գույքի նպատակային և խելամիտ տնօրինում, խնայողաբար օգտագործում:

5. ԳՊՀ մասնաշենքերի բարեկարգում, կապիտալ և ընթացիկ նորոգումների իրականացում:

6. ԳՊՀ դասախոսների հանրակացարանի վերանորոգում, կեցության պայմանների բարելավում:

7. ԳՊՀ դահլիճի վերանորոգում, տեխնիկական վերազինում, նոր՝ բազմագործառութային դահլիճի կառուցում:

8. Համալսարանի տեխնիկական բազայի վերազինում, արդի տեխնոլոգիական միջավայրի ձևավորում:
9. Փոքր տպարանի հիմնում, տպագրական-հրատարակչական գործի կազմակերպում:
10. ԳՊՀ մարզադահլիճների վերանորոգում, մարզային և հանրապետական նշանակության մարզամշակութային միջոցառումների կազմակերպում:
11. Գրադարանի և ընթերցասրահի բարեկարգում, ուսանողների, դասախոսների և այլ շահառուների սպասարկման արդիական պայմանների ստեղծում:
12. ԳՊՀ կենսապահովման գործառույթների պատշաճ իրականացում, ուսանողների ուսման և դասախոսների ակտիվ մանկավարժական ու գիտահետազոտական գործունեության համար պայմանների ապահովում, որակյալ կրթական և աշխատանքային միջավայրի ստեղծում:
13. Ֆինանսական, նյութատեխնիկական միջոցների կառավարման, ներբուհական տնտեսության կազմակերպման, գնումների կատարման կառուցակարգերի, էլեկտրոնային հաշվապահության գործող ծրագրի կատարելագործում:

**XII. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԵՎ  
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴԱՅՆՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ.**

1. ՀՀ կրթության և գիտության նախարարության, Գիտությունների ազգային ակադեմիայի գիտահետազոտական ինստիտուտների, Կրթության ազգային ինստիտուտի, Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի, Որակավորումների փոխձանաչման և այլ կառույցների հետ ակտիվ համագործակցություն:
2. Համագործակցություն Հայաստանի Հանրապետության և զարգացած պետությունների առաջատար բուհերի, այլ կրթական, գիտական հաստատությունների, դաստիարակչական, մշակութային ուղղվածության կազմակերպությունների հետ:
3. Համանման կրթական ծրագրեր իրականացնող բուհերի գործունեության ուսումնասիրություն, արդյունքների վերլուծություն, համադրում և առաջավոր փորձի կիրառում, Համալսարանի ինտեգրում եվրոպական գիտակրթական տարածք, կրթության միջազգայնացում:

4. Համալսարանի կրթական ծառայությունների պատշաճ ներկայացում և գովազդում՝ զանգվածային լրատվության միջոցների և համացանցի միջոցով, հանրությանը հավաստի տեղեկատվության մատուցում:
5. Հանրության հետ Համալսարանի կապերի ակտիվացում, մարզի բոլոր համայնքներում քարոզարշավի կազմակերպում, ավագ դպրոցների շրջանավարտների մասնագիտական կողմնորոշմանը նպաստում:
6. «Համալսարան-դպրոցներ» բազմաբնույթ համագործակցության ապահովում, գործընկեր դպրոցների ցանկի ընդլայնում, դպրոցների տնօրենների, մանկավարժական խորհուրդների, մասնագիտական մեթոդմիավորումների հետ գործընկերային հարաբերությունների հաստատում, խորհրդակցությունների, «Կլոր սեղանների», քննարկումների կազմակերպում, «ԳՊՀ-ն՝ Գեղարքունիքի մարզի դպրոցներին» ծրագրի շարունակական իրականացում:
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ համագործակցության ակտիվացում, քոլեջների և ուսումնարանների բարձր առաջադիմությամբ շրջանավարտների՝ կրթության շարունակական կազմակերպում Համալսարանում:
8. Արդյունավետ և նպատակաուղղված աշխատանքի կազմակերպում գործատուների և գործընկեր կազմակերպությունների՝ ՀՀ պետական և ոչ պետական կառույցների, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավորապես, Գեղարքունիքի մարզպետարանի, համայնքապետարանների, ինչպես նաև իրավապահ մարմինների, հարկային տեսչության, բանկերի մասնաձյուղերի, ձեռնարկությունների, տարբեր կազմակերպաիրավական ձև ունեցող սուբյեկտների հետ:
9. ՀՀ Գեղարքունիքի մարզի շահառուներին կրթական ծառայությունների մատուցման կենտրոնի ձևավորում, ԳՊՀ գրադարանի, տեղեկատվական, տեխնիկական և այլ առկա ռեսուրսների օգտագործում:
10. ՀՀ Գեղարքունիքի մարզում հետազոտությունների իրականացում, պատմամշակութային վայրերի ուսումնասիրում, գիտահետազոտական գործունեության արդյունքների օգտագործում ուսումնական գործընթացում:

**XIII. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ.**

1. Համալսարանի աշխատակիցների և սովորողների սոցիալական կարիքների հետազոտություն և հնարավորության սահմաններում օժանդակության ցուցաբերում:
2. Աշխատավարձերի աստիճանական բարձրացում, պարգևատրումների, նյութական և բարոյական խրախուսման այլ ձևերի կիրառում:
3. Ներառական կրթական միջավայրի ստեղծում, հաշմանդամություն ունեցող անձանց համար բարձրագույն կրթության մատչելիության ապահովում:
4. Ուսանողների և աշխատակիցների սննդի, հանգստի, ժամանցի պայմանների բարելավում:
5. Հանրապետությունում և, մասնավորապես, ՀՀ Գեղարքունիքի մարզում իրականացվող կրթամշակութային միջոցառումներում, սոցիալական տարբեր ծրագրերում ԳՊՀ-ի աշխատակիցների և ուսանողների առավելագույն ներգրավում:
6. Համալսարանի շրջանավարտների հետ կապի պահպանում, շրջանավարտների տվյալների էլեկտրոնային բազայի շարունակական համալրում, անմիջական և էլեկտրոնային հաղորդակցության ապահովում:
7. ԳՊՀ շրջանավարտների և Համալսարան-գործատու համագործակցության կենտրոնի աշխատանքի արդյունավետության բարձրացում, տեղեկատվության կուտակում մարզի գործատուների վերաբերյալ, ԳՊՀ շրջանավարտներին թափուր աշխատատեղերի մասին իրազեկում:
8. Համալսարանի տեղեկատվական նյութերի հրապարակում, համագործակցություն ԶԼՄ-ների հետ, ԳՊՀ՝ [www.gsu.am](http://www.gsu.am) համացանցային կայքի կատարելագործում, ծրագրային և տեխնիկական բարելավում, Համալսարանի և բուհի ներքին ու արտաքին շահառուների միջև հետադարձ կապի արդյունավետ կառուցակարգերի կիրառում:
9. Համալսարանի զբոսաշրջային ակումբի գործունեության ակտիվացում, ուսանողների և աշխատակիցների համար դեպի Հայաստանի պատմամշակութային վայրեր արշավների կազմակերպում, հայրենաճանաչության ծրագրերի իրականացում:
10. Համալսարանի ներքին շահառուների իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն, գործընկերների հետ արդյունավետ համագործակցության

ապահովում, բուհի նկատմամբ հանրային վստահության, Համալսարանի բարի համբավի ամրապնդում:

11. Համալսարանի 2016-2021 թվականների հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի, ԳՊՀ ակադեմիական ազնվության հայեցակարգի դրույթների իրականացում, կոռուպցիայի բոլոր դրսևորումների բացառում, բարեվարքության կանոնների պահպանում ու տարածում: